ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/33198-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի (Կ-863-11.06.2024-ԱՍ-011/1) փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում առաջարկում ենք պահպանել փոփոխություններ կատարվող հոդվածների հաջորդականությունը՝ մասնավորապես, 1-ին հոդվածում նշել 1081-րդ հոդվածի փոփոխությունը, 2-րդ հոդվածով՝ 1194-րդ հոդվածի փոփոխությունը, 3-րդ հոդվածով՝ 1207-րդ հոդվածի փոփոխությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը օրենքի նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների հաջորդականությունը փոխվել է, տրվել է նոր խմբագրությամբ՝

«Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1081-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «հաշմանդամներին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 1194-րդ հոդվածի 2-րդ մասում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ» բառերով:

Հոդված 3. 1207-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ծերերի եւ հաշմանդամների տներում» բառերը փոխարինել «բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում» բառերով, «ծերերի եւ հաշմանդամների տների» բառերը՝ «բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների» բառերով:»

2. «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «77-րդ հոդվածում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «77-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետում» բառերով, հստակեցման նպատակով:

3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «բառերից հետո» բառերը փոխարինել «բառից հետո» բառերով:

4. «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Գնահատվելու» բառն անհրաժեշտ է նշել փոքրատառով:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկներ չկան:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Աննա Սահակյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ. 010515826
Էլ փոստ՝ anna.sahakyan@gov.am